Հավելված 2

2022 թ. «02» «9»-ին

կնքված N *ԴՏՊ-1160-11009/Մ* պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

Ծրագրի անվանում	«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում»
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1160-11009/Մ
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.02.2022-31.12.2022
Հաշվետու ժամանակահատված	01.02.2022-31.03.2022
Ներկայացման օր	06.04.2022
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Նաիրա Առաքելյան, ՀԿ Նախագահ

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում.** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 8 շահառուների կարիքների գնահատում համապատասխան մեթոդաբանությամբ, որի արդյունքում ստացել ենք հստակ նկարագիր շահառուի կարիքների վերաբերյալ: Նրանցից 5-ը Արմավիր համայնքից են, մեկը՝ Արցախից տեղահանված է, մեկը՝ Մեծամոր համայնքից, մեկը՝ Բաղրամյան համայնքից: Շահառուներից չորսը անչափահաս են, չորսը՝ չափահաս:
- **Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում.** Գնահատման արդյունքում սոց.աշխատողի գլխավորությամբ թիմի կողմից մշակվել յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալական ծրագիր, որի արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար արդեն առկա է հստակ ծրագիր/պլան, որի հիման վրա մատուցվում են անհրաժեշտ պարապունքները և ծառայությունները:
- **Ծառայությունների և պարապմունքների նախանշում.** Շահառուների համար մշակվել է ծառայությունների ու պարապմունքների ժամանակացույց: Մասնագետների գնահատման համաձայն՝ շահառուների հետ համաձայնեցվում է աշխատելու ցանկալի վայրն ու ժամը: Կախված կարիքից՝ դրանք իրականացվում են ինչպես ԱԶԿ ՀԿ գրասենյակում, այնպես էլ

Արևածագ կենտրոնում, ինչպես նաև հենց շահառուների տարածքում՝ նայած, թե ինչպիսի առաջադրանքներ են դրվում. տրանսպորտից օգտվելու հմտություններ, տարածքի տիրապետում, տեղաշարժվում, գնումների կատարում և այլն:

- **Շահառուների կամ նրանց ծնողների հետ պայմանագրերի կնքում.** Կարիքները գնահատված շահառուների, իսկ 18-ից ցածր շահառուների ծնողների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագիր, որը թույլ է տալիս ունենալ իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև: Կնքվել է նաև պայմանագրի հավելվածով ծառայությունների մատուցման ժամանակացույց:
- **Ամենօրյա պարապմունքների և ծառայությունների մատուցում.** Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին մատուցվում է անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, սոցիալական խորհրդատվություն, իրազեկման աշխատանքներ, համակարգչային դասընթացներ: Էկրանի ընթերցող ձայնային ծրագրերի միջոցով սմարթֆոններից և համակարգիչներից օգտվելու հմտությունների ուսուցում, սպիտակ ձեռնափայտի գրագետ օգտագործման հմտությունների ուսուցում, ուղիղ կեցվածքի և հավասարակշռության ամրապնդում, սպիտակ ձեռնափայտի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ տարածքում կողմնորոշվելու հմտությունների ուսուցում: Իրականացվել է նաև սեմինար-հանդիպումներ ընտանիքի անդամների հետ, որոնք միտված են օգնել շահառուների ընտանիքի անդամներին հաղթահարելու իրենց հարազատի ֆիզիկական խնդրի հանդեպ կարծրատիպերը, վերաբերմունքը, վախերը և պատրաստ լինելու աջակցել նրանց ինքնուրույնությունը զարգացնելու հարցում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի: Հաշվետու ժամանակահտավծում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով. • Ամսական 8 պարապունք • ՏՀՏ դասընթացներ շաբաթական 2 պարապունք • Սպիտակ ձեռնափայտի ուսուցում շաբաթական 2 պարապունք • Սոցիալական խորհրդատվություն ամսական 2 հանդիպում

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ի սոցիալական էջում հետևյալ հղումներով. https://www.facebook.com/watch/?v=3338781376345857 https://www.facebook.com/armavirdc/posts/10165858827715704

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման էական խոչընդոտներ ներկայումս չեն գնահատվում: Դրանք որոշ չափով կարող են ներառել միայն շահառուների և նրանց ընտանիքի անդամների կարծրատիպային մտածելակերպը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

• Շահառուների սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված աշխատանքներ • Շահառուների՝ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ • Շահառուների՝ ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ • Էկրանի ընթերցող ձայնային ծրագրերի միջոցով սմարթֆոններից և համակարգիչներից օգտվելու հմտությունների ուսուցում(NVDA) • Շոշափելի տարրական գծային պատկերների, շոշափելի քարտեզների պատրաստում և կիրառում • Հանրային իրազեկման նպատակով կենտրոնի կողմից կկազմվեն բուկլետներ՝ ինչպես վարվել, երբ հանդիպում ես չտեսնող անձի խորագրով • Մշակութային այց Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր:

Շահառուների ցուցակ.

Ա.Ա.Հ.	Ծնն.ամսաթիվ	Կարգ.	Հասցե	Հեռ.
Ֆրանգուլյան Ֆրունզե Վահագնի	04.10.2003	Հ3	ք.Արմավիր, Երևանյան 23, բն. 2	094707312
Ավագյան Գոռ Զոհրաբի	13.12.2011	Հ/Ե	ք.Արմավիր, Սիլիկյան 2, տուն 28	093745915
Ավագյան Դավիթ Զոհրաբի	26.02.2010	Հ/Ե	ք.Արմավիր, Սիլիկյան 2, տուն 28	093745915
Թամոյան Ալիկ Բադոյի	10.08.2011	Հ/Ե	գ.Արտաշատ, 9-րդ փող., տուն 12	077643831
Մնացականյան Գառնիկ Արմենի	10.01.2010	Հ/Ե	ք.Արմավիր, Աբովյան 3-րդ նրբ., տու 2	093145320
Մկրտչյան Սոֆիկ Սամվելի	22.05.1961	Հ1	ք.Արմավի, Ջիվանու 13, բն. 21	093023147
Էվանիսյան Գերասիմ Գրիշայի	18.07.1961	Հ1	ք.Արմավիր, Շահումյան 15, բն. 32	093551745
Սաֆարյան Ալբերտ Ավանեսի	21.08.1998	Հ1	գ.Հուշակերտ, 6-րդ փող., տուն 4	094155445

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- Երկու ընտանիքի ԱԶԿ ՀԿ-ի կողմից տրամադրվել է համակարգիչ, որպեսզի երեխաների ՏՀՏ դասընթացների ուսուցումը լինի արդյունավետ:
- Ուղղոդել ենք ՄՍԾ, աջակցել ենք պոլիկլինիկայում բժշկական քարտի տրամադրման աշխատանքներում:

ԱԶԿ ՀԿ նախագահ Ն. Առաքելյան